ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատիժների կատարում, վերահսկողության իրականացում, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցների տրամադրում.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում **2024 թվականի ընթացքում** հաշվառվել է **14747** վարույթ, որոնցից **7837** պատիժ, **3221** վերահսկողություն, **2168** վարույթ տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցներ: Վարույթների ընդհանուր թվի մեջ ներառված չեն դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար ներկայացվող զեկույցները:

Հաշվետու ժամանակահատվածում պատիժներով և վերահսկողություններով հաշվառվել է **12579 վարույթ**, իսկ **2023 թվականին՝ 7313** վարույթ: **2024 թվականին** հաշվառված վարույթների թիվը **5266-ով (72%)** ավել է **2023 թվականի** նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում տուգանք պատժատեսակով գանձվել է 1.264.407.752 դրամ:

2023 թվականին գանձվել է **578.199.300 ՀՀ դրամ: 2024 թվականին** գանձվել է **686.208.452 ՀՀ դրամով (18,7%)** ավելի գումար:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար զեկույց կազմելու **788** ծանուցում, որոնց հիման վրա կազմվել է **778** զեկույց (**84**-ը դրական, իսկ **694**-ը բացասական եզրակացությամբ), իսկ **73-ը** գտնվում են կազմման փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում պրոբացիայի ծառայությունում առկա **12579 վարույթներով** (պատիժ և վերահսկողություն) հաշվառված անձանցից **կրկնահանցագործություն կատարել է 193 անձ,** որը կազմում է Ծառայությունում հաշվառված շահառուների մոտ **1.5%-ը:**

2023թ. պրոբացիայի ծառայությունում առկա **7313 վարույթներով** պատիժ և վերահսկողություն հաշվառված անձանցից **կրկնահանցագործություն կատարել է 102 անձ,** որը կազմում է Ծառայությունում հաշվառված շահառուների մոտ **1.3%-ը**:

Պատիժներ

Հաշվետու ժամանակահատվածում պատիժներով հաշվառվել է 9358 վարույթ, իսկ 2023 թվականի ընթացքում՝ **4798** վարույթ: 2024 թվականին հաշվառված վարույթների թիվը **4560-ով 95%** ավելի է 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Տուգանք. Հաշվետու ժամանակահատվածում տուգանք պատժատեսակով հաշվառվել է **7837** վարույթ, իսկ 2023 թվականին՝ **3913** վարույթ: 2024 թվականին իրականացված վարույթների թիվը **3924**-ով **100,3%** ավելի է 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

2024 թվականին գանձման ենթակա գումարը կազմել է **3.493.810.173** ՀՀ դրամ, որից **241.725.286** ՀՀ դրամի գանձման գործընթացը դադարեցվել է տարբեր հիմքերով, մասնավորապես մահվան, տուգանքը փոխարինվել է հանրային աշխատանքներ պատժատեսակով կամ ազատազրկմամբ և օրենքով սահմանված այլ հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում գանձնվել է **1.264.407.752** ՀՀ դրամ, իսկ **1.987.677.135** ՀՀ դրամը փոխանցվել է **2025 թվական** և գտնվում է կատարման ընթացքում: Հաշվետու ժամանակաշրջանում **2956** վարույթի կատարումն ավարտվել է, իսկ **4881** վարույթ գտնվում է կատարման ընթացքում դարաժամկետված, հետաձգված, երկարաձգված:

Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակահատվածում հանրային աշխատանքներ պատժատեսակով հաշվառվել է **1127 վարույթ**, իսկ 2023 թվականին՝ **533** վարույթ: 2024 թվականին հաշվառված վարույթների թիվը **594-ով 11,4%-ով** ավելի է, 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ: Հաշվետու ժամանակահատվածում **764** վարույթի կատարումն ավարտվել է, իսկ **363** վարույթ կատարման ընթացքում է:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում. Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է **256 վարույթ,** իսկ **2023 թվականին՝ 341** վարույթ: 2024 թվականին հաշվառված վարույթների թիվը 85-**ով պակաս է** 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **100** վարութի կատարումն ավարտվել է, իսկ **156** վարույթ կատարման ընթացքում է:

Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարել. Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է **22 վարույթ, իսկ 2023թ՝ 5:** 2024 թվականին հաշվառված վարույթների թիվը 17-**ով** □**340%-ով**□ ավելի է, 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում 8 վարույթի կատարումն ավարտվել է, իսկ 1**4-ը՝** կատարման ընթացքում են:

Ազատության սահմանափակում. Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է **116 վարույթ,** իսկ **2023թ.՝ 6:** 2024 թվականին հաշվառված վարույթների թիվը 110-**ով** ավելի է, 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ: բոլորն էլ գտնվում են կատարման ընթացքում: Հաշվետու ժամանակահատվածում 22 վարույթի կատարումն ավարտվել է, իսկ 9**4-ը՝** կատարման ընթացքում են:

Վերահսկողություններ.

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան. Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է **2893 վարույթ**, իսկ 2023 թվականին՝ **2202** վարույթ: 2024 թվականին հաշվառված վարույթների թիվը **691** վարույթով □**31,4%-ով**□ավելի է, 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **710** վարույթ ավարտվել է, իսկ **2183** վարույթ կատարման ընթացքում է:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում. Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է **294 վարույթ**, իսկ 2023 թվականին՝ **303** վարույթ: 2024 թվականին հաշվառված վարույթների թիվը **9-ով** պակաս է 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **131** վարույթ ավարտվել է, իսկ **163** վարույթ կատարման ընթացքում է:

Պատժի կրման հետաձգում.

Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է **13 վարույթ,** 2023 թվականին՝ **6** վարույթ, որը 7-**ով** ավելի է 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում **13** վարույթ գտնվում է կատարման ընթացքում:

Անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով. Հաշվետու ժամանակահատվածում

հաշվառվել է **21 վարույթ**, իսկ **2023 թվականի** ընթացքում՝ **4 վարույթ**, որը **17-ով** ավելի է 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում 5 վարույթ ավարտվել է, իսկ **16-ը**՝ գտնվում են կատարման ընթացքում:

Խափանման միջոցներ

Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է **2168 վարույթ, որից 1375-ը տնային կալանք, իսկ 793-ը վարչական հսկողություն** խափանման միջոցներով, իսկ 2023թ. հաշվառվել է **866 վարույթ, որից 638-ը տնային կալանք, իսկ 228-ը վարչական հսկողություն** խափանման միջոցներով: 2024թ. խափանման միջոցներով հաշվառված վարույթների քանակը 1302-ով ավելի է 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ **150,3%-ով**:

Հաշվետու ժամանակահատվածում 849 վարույթ ավարտվել է, իսկ **1319**-ը գտնվում են կատարման ընթացքում, **690 տնային կալանք, 629 վարույթ վարչական հսկողություն**:

1. Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրման միջոցառումներ և ծրագրեր.

Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ և իրականացված վերասոցիալականացման միջոցառումների արդյունքում աշխատանքի են տեղավորվել 7 շահառու, 2023թ. **13** շահառու:

Կրթական միջոցառումներին մասնակցել է **45 շահառու** (շահառուներից ոմանք մասնակցել են 2 և ավելի տարբեր դասընթացների):

ՀՀ ԱՆ Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է **կրթական դասընթացներ**՝ կահույքաշինության հիմունքներ/1մոդուլ/, անգլերեն լեզու/ 2մոդուլ /, համակարգչային հմտություններ /3մոդուլ/, **ընդհանուր 6 մոդուլ, որին ընդգրկվել են թվով 45 շահառուներ, դասընթացի ավարտից հետո 26 շահառուների տրամադրվել են հավաստագրեր:**

2023 թվականի ընթացքում կրթական միջոցառումներին մասնակցել են **28** շահառու:

63 մշակութային միջոցառումներին մասնակցել են **611** շահառու, պրոբացիայի շահառուները դիտել են զանազան ներկայացումներ, ինչպես նաև այցելել են տարբեր մշակութային կենտրոններ, պատկերասրահներ և թանգարաններ:

9 մարզական միջոցառումների մասնակցել են **81** շահառու:

Կրոնական միջոցառումներին մասնակցել են **134** շահառու:

Հոգեբանական անհատական խորհրդատվություն է տրամադրվել **38** շահառուների, որոնցից 2-ը անչափահաս շահառուներ են: Իրականացվել է **16 հոգեբանական խմբային թրեյնինգներ՝** ուղղված շահառուների ինքնակարգավորման մեխանիզմների զարգացմանը, հույզերի կառավարմանը, ծնողավարման հմտությունների զարգացմանը և այլ խնդիրներին,որին մասնակցել են **96** շահառուներ:

Իրականացվել են **56 այլ տարաբնույթ միջոցառումներ**, ինչպիսիք են «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղը, հանրօգուտ աշխատանքներ /շաբաթօրյակներ/ միջոցառումները, իրականացվել է իրավագիտակցության բարձրացմանն, ծնողավարման, հույզերի և կոնֆլիկտների կառավարման, առողջ ապրելակերպին ուղղված թրեյնինգներ, շահառուներն այցելել են հրատարակչություններ, գրադարաններ, մասնակցել են երեխաների պաշտպանության տոնին նվիրված միջոցառումներին և այլն, վերոնշյալ միջոցառումներին մասնակցել են թվով **424** շահառուներ:

Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ Կախվածությունների բուժման ազգային կենտրոն են ուղղորդվել պրոբացիայի ծառայությունում հաշվառված 10 շահառուներ:

2. Էլեկտրոնային հսկողության ապահովում.

2023 թվականից Պրոբացիայի ծառայությունը սկսել է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված այլընտրանքային խափանման միջոցներից տնային կալանքը և վարչական հսկողությունը: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունում ձեռք է բերվել 914 էլեկտրոնային հսկողության սարքավորում /ընդամենը 1575/, որոնք կիրառվել են 2168 անձի նկատմամբ:

3. Օրենսդրության կատարելագործում և իրավական ակտերի նախագծեր.

Պրոբացիայի ծառայության կողմից 2024 թվականի ընթացքում մշակվել են և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝ Հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության պաշտոններին համապատասխանող սկզբնական կոչումները սահմանելու մասին, Քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարման ծառայությունների պաշտոններ զբաղեցնելու մրցույթի անցկացման կարգը սահմանելու մասին, Պրոբացիայի ծառայողների կողմից գործադրվող հատուկ միջոցների ցանկը սահմանելու մասին, Պրոբացիայի ծառայողների ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը վճարման կարգը սահմանելու

մասին□ □Պրոբացիայի ծառայողների ատեստավորման կարգը սահմանելու մասին□, ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 17-ի թիվ 543-Ն որոշմամբ լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի թիվ 911-Ն որոշման մեջ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2024 թվականի հունվարի 17-ի □Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումների և տարածքային մարմինների պաշտոններում նշանակվելու համար որակավորման ստուգման անցկացման կարգը հաստատելու մասին□N 5-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2024 թվականի մարտի 19-ի □Պրոբացիայի ծառայողի երդման կարգը հաստատելու մասին□N 160-Լ հրամանը, □Քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարման ծառայողներին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանելու մասին□ՀՀ փոխվարչապետի որոշումը:

E-probation էլեկտրոնային համակարգ

2024թ. ընթացքում շարունակվել են E-probation էլեկտրոնային համակարգի բարելավման աշխատանքները: 2023 թվականին անցում է կատարվել E-probation էլեկտրոնային համակարգի, փաստաթղթաշրջանառությունն առաձնացվել է Mulberry 2 համակարգից: Հաշվետու ժամանակահատվածում բոլոր տարածքային մարմիններում անձնական գործերը վարվում են E-probation էլեկտրոնային համակարգի միջոցով:

4. **Նյութատեխնիկական ապահովում և ծառայությունների ձեռքբերում.**

1. Նոր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված տնային կալանք և վարչական հսկողության խափանման միջոցների, ազատության սահմանափակում պատժատեսակի կատարման նպատակով՝ Արդարադատության նախարարությունը 2023 թվականի հոկտեմբերի 22-ին հայտարարել է Էլեկտրոնային հսկողության սարքերի ձեռքբերման պայմանով մրցույթ, որի շրջանակում կնքվել է թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/40-1 պայմանագիրը հաղթող ճանաչված՝ ENIGMA information protection Systems Ltd. ընկերության հետ: Պայմանագրի շրջանակներում վարչական հսկողության սարքերի չափաբաժնով կատարվել է 10%-ի ավելացում, որի արդյունքում ձեռք է բերվել 1235 էլեկտրոնային հսկողության սարքավորումներ, որից՝ առաջին խմբաքանակով մատակարարվել է թվով 160 էլեկտրոնային հսկողության սարքավորում (տնային կալանքի համար՝ 110 և վարչական հսկողության համար՝ 50), /ձեռք է բերվել 2023թ./

երկորդ խմբաքանակով մատակարարվել է թվով 161 էլեկտրոնային հսկողության սարքավորում (տնային կալանքի համար՝ 61 և վարչական հսկողության համար՝ 100),

երրորդ խմբաքանակով մատակարարվել է թվով 184 էլեկտրոնային հսկողության սարքավորում (տնային կալանքի համար՝ 63 և վարչական հսկողության համար՝ 121), /ձեռք է բերվել 2023թ./

չորրորդ խմբաքանակով մատակարարվել է թվով 225 էլեկտրոնային հսկողության սարքավորում (տնային կալանքի համար՝ 111 և վարչական հսկողության համար՝ 114),

հինգերորդ խմբաքանակով մատակարարվել է թվով 150 էլեկտրոնային հսկողության սարքավորում (տնային կալանքի համար՝ 50 և վարչական հսկողության համար՝ 100),

վեցերորդ խմբաքանակով մատակարարվել է թվով 355 էլեկտրոնային հսկողության սարքավորում (տնային կալանքի համար՝ 255 և վարչական հսկողության համար՝ 100)։

Էլեկտրոնային հսկողության սարքերի աշխատանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ապահովելու նպատակով, ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձեռք են բերվել նաև բջջային կապի ծածկույթն ապահովող անհրաժեշտ 1235 սիմ-քարտեր։

2. 2024 թվականի ընթացքում մրցութային ընթացակարգով ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա՝ 27 համակարգիչ՝ ամբողջը մեկում, 15 լազերային տպիչ, 2 սկաներ համակարգիչների համար, 42 անխափան սնուցման սարք, 10 բազմաֆունկցիոնալ սարք, 16 գրասեղան, 13 զգեստապահարան, 3 ղեկավար սեղան, 46 աթոռ։

3. Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակի կողմից 2024 թվականին Ծառայությանը նվիրաբերվել է 15 համակարգիչ՝ ամբողջը մեկում, 1 տեսախցիկ և 1 տեսակոնֆերանսի համար նախատեսված էկրան՝ տեսախցիկով։

4. Պրոբացիայի ծառայությանը ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 396-Ա որոշումով հատկացվել է նոր վարչական շենք՝ ք.Երևան Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում 1634,8 քառ. մետր մակերոսով։ Քանի որ նշված շենքը նախկինում շահագործվել է որպես դատարան (Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան), իրականացվել է դատական նիստերի դահլիճների ձևափոխման և դրանք աշխատասենյակների

համապատասխանեցման, մասնակի հարդարման, կահավորման, գույքերի տեղափոխման աշխատանքներ, որի արդյունքում ծառայությունը նոյեմբեր ամսից արդեն տեղակայված է նշված վարչական շենքում:

5. ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի N1168-Ա որոշումով Պրոբացիայի ծառայությանը հատկացվել է «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի ք.Երևան Ծովակալ Իսակովի պողոտա 50/12 հասցեում գտնվող մասնաշենքից 357,7 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածք, որի արդյունքում Արարատի մարզում գործող Պրոբացիայի «Մասնագիտական ուսուցման կենտրոնը» նախատեսվում է տեղափոխվել վերոնշյալ հասցե, որը հնարավորություն կտա ընդլայնել պրոբացիայի շահառուներին տրամադրվող մասնագիտությունների քանակը, ինչպես նաև դասընթացներին կներգգավվեն Երևան քաղաքում և հարակից մարզերում հաշվառված ավելի մեծ թվով պրոբացիայի շահառուներ:

5. Համագործակցություն պետական և ոչ պետական կառույցների հետ

1. Եվրոպայի խորհրդի կողմից «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակներում 2024 թվականին աշխատանքներ են տարվել շահառուների ռիսկերի և քրեածին պահանջմունքների գնահատման գործիքի վերամշակման ուղղությամբ, որի շրջանակներում գնահատվել են Պրոբացիայի ծառայությունում հաշվառված առաջին անգամ դատապարտված 500 շահառուների և քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող 200 կրկնահանցագործություն կատարած դատապարտյալների ռիսկերը և քրեածին կարիքները: Ուսումնասիրվել են վերոնշյալ շահառուների և դատապարտյալների ռիսկերի և քրեածին կարիքների գնահատման արդյունքները, որի արդյունքում վերամշակվել է գործիքը: Նոր վերամշակված գործիքը անցել է պիլոտավորման փուլ, որի արդյունքում էլ 2024 թվականի վերջին ներկայացվել է Արդարադատության նախարարի հաստատմանը:

2. Պրոբացիայի ծառայությունը, համագործակցելով ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, Պրոբացիայի ծառայության «Մասնագիտական ուսուցման կենտրոն»-ում իրականացրել է «Կահույքաշինության հիմունքներ» մասնագիտական դասընթացը: Վերոնշյալ ՊՈԱԿ-ի կողմից Պրոբացիայի ծառայությունում /Երևան քաղաքում/ իրականացվել են նաև անգլերեն լեզու և համակարգչային հմտություններ դասընթացները, որոնց արդյունքում դասընթացին մասնակցած 45 շահառուներից 26-ը ստացել են հավաստագրեր:

3. Եվրոպայի խորհրդի կողմից «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակներում 2024 թվականին Պրոբացիայի ծառայությունում ներդրվել է երկու վերականգնողական ծրագրեր՝ «Բռնի վարքի նվազեցման» և «Կախվածությունների հաղթահարման» ուղղությամբ, որի շրջանակներում մշակվել են ձեռնարկներ, Բռնի վարքի նվազեցում ծրագրի շրջանակներում Պրոբացիայի ծառայության համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետները անցել են վերապատրաստողների վերապատրաստում դասընթացը, այնուհետև վերոնշյալ ծրագիրը անցել է պիլոտավորում շահառուների շրջանում, մյուս ծրագրի պիլոտավորումը նախատեսվում է 2025 թվականի առաջին եռամսյակում: Ծրագրերը ներդրվել են նախապես հաշվի առնելով շահառուների կարիքները, որը նպաստելու է վերջիններիս վերասոցիալականացմանը և առավել արդյունավետ վերաինտեգրմանը հասարակություն:

4. 2024 թվականի ընթացքում Եվրոպայի խորհրդի կողմից «Աջակցություն Հայաստանում Պրոբացայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակներում իրականացվել է Պրոբացիայի ծառայողների վերապատրաստումներ, որի ընթացքում ներկայացվել են շահառուների հետ աշխատանքային դաշինք ստեղծելու, մոտիվացիոն հարցազրույցներ վարելու վերաբերյալ թեմաներ, որոնք ըստ էության նպաստելու են Պրոբացիայի ծառայության վերոնշյալ գործառույթների առավել պատշաճ և արդյունավետ իրականացմանը:

5. Եվրոպայի խորհրդի կողմից Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026 թվականների ծրագրի շրջանակում տեղի է ունեցել համաժողով, որտեղ ներկայացվել են Պրոբացիայի ոլորտում միջգերատեսչական համագործակցության միջազգային ստանդարտները և եվրոպական առաջատար փորձը, միջգերատեսչական և միջառարկայական համագործակցության ամրապնդման հնարավոր ոլորտները, դաշտի բարելավման ուղղությամբ իրականացվող քայլերը, ինչպես նաև ոլորտում գործող գերատեսչությունների, համայնքային մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության հնարավոր ուղղությունները:

6. Եվրոպայի խորհրդի կողմից «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակներում 2024 թվականի հունիսի 11-12 տեղի է ունեցել «Քրեական արդարադատության ոլորտում վերականգնողական արդյունավետ մոտեցումների ուսումնասիրում. միջազգային մոտեցումներ» թեմայով համաժողով, որի

շրջանակներում Եվրոպայի խորհրդի կողմից հրավիրված միջազգային փորձագետները և Պրոբացիայի ոլորտում առաջատար փորձ ունեցող տարբեր երկրներից հրավիրյալ ներկայացուցիչները ներկայացրել են իրենց երկրների Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացման և վերականգնողական ոլորտի առաջադեմ փորձը և իրականացվող ծրագրերը ու միջոցառումները, համաժողովին զեկույցով հանդես է եկել նաև ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ներկայացուցիչը։

7. Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի (Confederation of European Probation – CEP) անդամակցության և Նիդերլանդների Հելսինկյան կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի ապրիլի 14-19-ը Պրոբացիայի ծառայության հինգ աշխատակիցներ ճանաչողական այցով գտնվել են Նիդերլանդների Թագավորությունում և մասնակցել են Պրոբացիայի և պայմանական վաղաժամկետ ազատման համաշխարհային 6-րդ կոնգրեսին։

ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ **ԱՍՏՂԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**